

ՀԱՅԱՍՏԱՆ



ՄԵՐ ԸՆԴԵՐԸ — ՄԵՐ ՈՅԺԸ .

«Հնչակի» ընթերցողների համար նորութիւն չէ մեր այն միտքը, թէ հայկական յեղափոխութեան գլխաւոր ոյժը ժողովուրդն է, աշխատաւոր ընդհանրութիւնն է, Բայց ինչո՞ւմն է կայանում այդ ոյժը և ի՞նչ կերպարանքի մէջ պէտք է ծուլի նա, որ յիրաւի ծառայէ իր նպատակին, այսինքն խկապէս կարող լինի պաշտպան լինել ժողովրդային ընդհանրութեան շահերի թէ՛ ապրտամբաւ կան յեղափոխական տաղնապնների միջոցին և թէ՛ զրանցից յետոյ անմիջապէս Այդ երկու կարևոր հարցերի լուծումը մեծ նշանակութիւն ունի հայ ժողովրդի Գործի աջողութեան համար Այդ երկու կարևոր հարցերի պատշաճ լուծումը որոշող է յայտնում, թէ ի՞նչ ուղղութեամբ պէտք է զործեն յեղափոխական կուսակցութիւնը և հայ բանող ժողովուրդը Այդ երկու կարևոր հարցերի պատշաճ լուծումը որոշում է նաև հայ աշխատաւոր ժողովրդի դերն ու նշանակութիւնը յեղափոխութեան մէջ:

Երբ որ յայտնում ես թէ ժողովուրդն է յեղափոխութեան ոյժը, այդ խօսքից ընդհանրապէս այն են հասկանում, թէ ժողովուրդն է իսկական մարտական զօրագունը կազմողը թշնամու դէմ: Այդ միտքն արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի լինելով, ամենքը բաւականաւում են այդ պատասխանումի Այլ ևս հարցնող չէ լինում, թէ արդեօք միմիայն այդ արտաքին՝ մարտական տեսակէտից է ժողովուրդը յայտնում յեղափոխութեան ոյժը: Այլ ևս ոչ ոք չէ կարծում, որ այդ պատասխանն իսկապէս չօշափում է հարցի միայն մի կողմը, որ հարցի միւս ներքին կողմը նկատվում չէ: Մենք հիմա կը տեսնենք, որ հարցի միւս կողմն է միայն յուսարածում, թէ ինչ է նշանակում յեղափոխութեան ոյժը ժողովուրդն է: Մենք հիմա կը տեսնենք նոյնպէս, որ հարցի այդ երկրորդ կողմը մեծ ու եզակի դեր է խաղում յեղափոխութեան մէջ և գծադրում նրա իմաստը, ուղղութիւնն ու նշանակութիւնը:

Հայկական խնդիրը հայ ժողովրդի քաղաքական, հասարակական ու տնտեսական ազատութեան խնդիրն է. նա հայ ժողովրդի մարդկային տաղանդի թիւն,

մարդկային զարգացման խնդիրն է. նա հայ ժողովրդի ընդհանուր բարօրութեան խնդիրն է. Հայ աշխատաւոր ժողովրդային ընդհանրութեան արգանդից է ծնվել այդ խնդիրը: Նա նոյն ընդհանրութեան կական պահանջների ծնունդն է: Իսկ այդ կական պահանջներից ամենագլխաւորն է տնտեսական պահանջը, որ մարդկային գոյութեան և մի և նոյն ժամանակ զարգացման հիմնարարն է:

Հայկական խնդիրն այդպէս լինելով, նա յայտնում է իրեն ժողովրդային խնդիր: Նա պահանջում է աշխատաւոր ժողովրդի բոլոր շահերի պատշաճ գոհացումը: Նա լուծված կարող է լինել լոկ այն ժամանակ, երբ այդ բաղմաղան շահերն ընդարձակօրէն գոհացում ստանան: Հետևաբար նա կարող է լուծում ստանալ լոկ այն ժամանակ, երբ այդ շահերին գոհացում տալու համար ազատված Հայաստանը կունենայ քաղաքական, հասարակական ու տնտեսական պատշաճ պայմաններ: Եթէ այդ պատշաճ պայմաններն ազատված Հայաստանում գոյութիւն չունենան, աշխատաւոր ժողովրդի շահերը կորցրած կը լինեն իրենց դատը: Եթէ այդ շահերը կորցրած կը լինեն իրենց դատը, ուրեմն և աշխատաւոր ժողովրդի դատը չ'ըլլած կը հանդիսանայ: Միանգամ ժողովրդի դատը լուծված չի լինել, ուրեմն և յեղափոխութիւնը հասած չի լինել իր նպատակին:

Այդ բոլորն այն եղբակացութեան են հանգում, թէ յեղափոխութիւնն այնպիսի ուղղութիւն պէտք է ունենայ, որ ժողովրդային դատը յաղթանակ տանէ. այլ խօսքով, որ աշխատաւոր ժողովրդի բաղմաղան շահերին հարկ եղած կերպով գոհացում տրվէ, այդ գոհացման համար յեղափոխութեան միջոցով ձեռք բերած լինելով նպատաւոր ու պատշաճ հասարակական, տնտեսական ու քաղաքական պայմաններ: Եթէ այդ չիրագործվէ, յեղափոխութիւնն ունեցած չի լինել իր հարկաւոր ու բնական ուղղութիւնը և այդպիսով անբնական կերպով վրձած կը լինի իր մանուկը:

Հետևապէս, յեղափոխութեանը պէտք է տալ այնպիսի ուղղութիւն — իր բնական ուղղութիւնը, — որ նա չը վիժէ, որ այնքան արիւն ու կորուստները ժողովրդի շահերին համար գրեթէ անօգուտ չը յայտնվին: Եղափոխական

կուսակցութիւնը պէտք է լաւ չմտնէ հայկական խնդրի բուն ժողովրդային գառ լինելու իմաստը: Միանգամայն ըմբռնեց այդ, այնուհետեւ, իրեն առաջադիմութեան ճշմարիտ փաստագրով, նա պէտք է հայկական խնդրի այդ բնական պաշտօնը համեմատ գործէ, ծածանելով հայ ժողովրդային յեղափոխութեան գրողակը: Նա պէտք է պաշտպան հանդիսանայ աշխատատեղի ժողովրդի, որի գառի իսկական ճշմարիտ լուծումով նա կազատէ ստրուկ ժողովրդին, կը գնէ նրան զարգացման ուղիի վրայ, զրաւ նով միտածմանակ ազատած լինելով հայ ազգին ամբողջովին: Այն՝ մի յեղափոխական շարժման մէջ նա պէտք է զգացնել տայ իր փանքը, թէ աշխատատեղի ժողովրդի շահերի համեմատ է գործում: Այն՝ մի յեղափոխական յուզման ու պայթման միջոցին նա պէտք է արեան ու կրակի տառերով յայտարարէ, թէ ժողովրդային շահին է ծառայող, թէ այդ շահի պատշաճ կերպով լուծում տվող քաղաքական անտեսական ու հասարակական պայմանների համար է մարտնչում:

Բայց յեղափոխական կուսակցութիւնն իր այդ կոչումն ու դերը կատարել կարողանալու համար պէտք ունէ ժողովրդային շահերի բնական պաշտպանն ու անհրաժեշտ անդամը: Ուրեք են այդ բնական պաշտպանները: Ինքն աշխատատեղը, ինքն բանողը, ինքն ժողովուրդը, որի շահերն են յեղափոխութիւն պաշտպանում: Յեղափոխական կուսակցութեան գործունէութեան համար անհրաժեշտ է աշխատատեղի ժողովրդի անկախութիւնը: Սակայն ի՞նչը կարող է երաշխաւորել, թէ ժողովուրդը կաջակցէ նրան: Ժողովուրդը որչափ հեշտութեամբ հարում է գործողներին, նոյնչափ հեշտութեամբ էլ կարող է նրանցից պաղել: Այդ փոխութիւնները յեղափոխական պատեւրազմի ժամանակ կարող են երբեմն վճռական դեր խաղալ և վնասել գործին ու թէկուզ հէնց այն կուսակցութեան, որ ժողովրդի շահերն է պաշտպանում: Ի՞նչ բան ժողովրդին կարող կը լինի սերտ կերպով կապել այն կուսակցութեան հետ, որ նրա գրողակն է կրում: Գրան պատասխան այն է, թէ ժողովուրդը, կամ զոնէ նրա ամենաարթուն մասը, որքան էլ փոքրաթիւ լինի այդ մասը, զգայ, տեսնէ, իմանայ, որ յայտնի կուսակցութիւնը ժողովրդի իսկական շահերի պաշտպան է, որ նրա սկզբունքները, ծրագիրն ու գործունէութիւնը համապատասխան են ժողովրդային շահերի պաշտպաններին: Բայց որպէս զի ժողովուրդը, կամ նրա մի մասն այդ իմանայ, նա պէտք է նախ և առաջ տեղեկ լինի, թէ որոնք են իր շահերը, թէ ինչ կորսնակով կարող են նրանք պաշտպանվել և թէ պատերազմից յետոյ ինչ հասարակական պայմաններ են պէտք, որ այդ շահերին նպաստատեղ լինեն: Ուրեմն, պէտք է մէկը լինի, որ ժողովրդին

այդ բացատրէ: Այդ մէկն ահա յեղափոխական կուսակցութիւնն է, որ աշխատատեղի ժողովրդի մէջ գտնվող ամենաընդունակ տարրերին յեղափոխութեան իմաստի պրօպագանդա պէտք է անէ, բացատրէ նրան թէ ինչ հասարակական պայմաններ ժողովրդին բարեկեց կը գարձեն, նրա շահերին զոհացում կը տան և այլն: Այդ պրօպագանդա անելով, յեղափոխական կուսակցութիւնը պէտք է այդ տարրերից, որքան հանգամանքները ներում են, կաղմէ մի յեղափոխական կազմակերպութիւն: Այդ ընդունակ տարրերը հայ քաղաքային աշխատատեղերն են, որպէս նաև զիւղացիները ամենաարթուն ու աշխատաւոր մասը: Միանգամ կաղմված, յեղափոխական ժողովրդային այդ մարմինն առուել կամ ալակոտ աստիճան գիտակցական կերպով շարունակ հրապարակ կը հանէ իր, այսինքն ժողովրդային ընդհանրութեան, շահերը, նրանց զոհացումը պահանջելով և միշտ կը լինի դորավիզն այն յեղափոխական կուսակցութեան, որ բարձրացրել է ժողովրդի գրողակը: Յեղափոխական տաքնադիրների միջոցին այդպիսի ժողովրդային յեղափոխական կազմակերպութիւնը զիտակցարար կաջակցէ յեղափոխական կուսակցութեան, որի նշանաբանն է՝ ժողովրդային գառ: Իսկ յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ այդ ժողովրդային կազմակերպութիւնն աւելի մեծ ու վճռական դեր ունէ և աւելի մեծ փայլով ցոյց կը տայ իր պիճն, իր նշանակութիւնը հայ ժողովրդի ճակատագրի վերաբերութեամբ:

Երբ ազատամարտի, յեղափոխական կուսակցութիւնը կաջողէ իր ձեռքը գցել երկրի քաղաքական զեկը — ահա այդ ժամանակ ժողովրդային իր շահերն իմացող յեղափոխական կազմակերպութիւնը կը հանդիսանայ այն մեծ ու գրական ոյժը, որ յենարան լինելով յեղափոխական կուսակցութեան, կը տայ սրան իր ծային ու պաշտպանութիւնը՝ աշխատատեղի ժողովրդի շահերի համեմատ հասարակական պայմաններ հաստատելու: Գծաւորը յեղափոխութիւն անելը չէ, այլ յեղափոխութիւնից յետոյ երկրին ցանկացած հասարակական կերպարանք տալը և ձեռք բերած իրաւունքները պաշտպանելն է ամենազոքուարը: Այդ վերջին մեծ ու վճռական դեր կատարողը կարող է լինել միայն ժողովրդային յեղափոխական կազմակերպութիւնը, որ իր ետնից կը տանէ ու կունենայ ամբողջ ժողովրդային ընդհանրութիւնը: Այդ ժամանակ յեղափոխական կուսակցութիւնը վստահ կը լինի իր յաղթութեան վրայ ոչ միայն ապստամբական տեսակէտից, այլ և յեղափոխական այն է երկրի հին կարգերի գէպի նորերը վերածման տեսակէտից: Այսինքն քաղաքական զեկն իր ձեռքը գցած, կուսակցութիւնը յենվելով ժողովրդային յեղափոխական կազմակերպութեան վրայ՝ կարող կը լինի անօրինել այնպիսի քաղաքական ու

անտեսական նոր կարգեր, ստակալարական կարգեր, որ նպատատար կը լինեն ժողովրդի չափին, նրա դատին, նրա զարգացման ու բարձրութեան, որով և ամբողջ ազգի գաղտնի։ Այդ ժամանակ յեղափոխական կուսակցութեան կառավարութիւնը կատարելով իր դերը, երկրի ձեռք բերած քաղաքական զեկը կարող է յաղթութեամբ յանձնել ժողովրդային յեղափոխական կազմակերպութեան, նոյն իրեն ժողովրդին, որի գրողին էր նա բարձրացրելը։

Արեւմտեան, ժողովուրդը մեր ընկերը — մեր այժմ է ո՛չ միայն, այսպէս ասած, արտաքին՝ մարտական ապստամբական տեսակէտից, այլ և ներքին, էական յեղափոխական տեսակէտից։ Միանգամ մենք, որ ժողովրդի գաղտնի պաշտպանն ենք, այդ տեսակէտը ըմբռնել ենք ու գիտենք, պէտք է շարունակ աւելի ու աւելի աշխատենք ունենալ այդպիսի ժողովրդային յեղափոխական կազմակերպութիւն նոյնքան ընդարձակ, որքան ներսում են հանգամանքները, և կազմած ժողովրդային ամենաընդունակ տարրերից։

Մեր Ծրագրի, որի «կազմակերպութեան» բաժնի 6 և 7 կէտերի բացատրութիւնն է այս յօդուածը, իմաստն ու ոգին չըմբռնողները և կամ ըմբռնել չուզողները մերկ կերպով պնդում են շարունակ, թէ հիմա կուէնք, սպառնալով իրեն բարձրացնենք, իսկ յետոյ ինչ ուղում է՝ թող լինի։ Մինչդեռ այդպիսով նրանք միանգամայն սուղացուցանում են, որ հայկական խնդիրն իրենք սխալ են ըմբռնել, որ կատարելապէս անտեղեակ են հայկական յեղափոխութեան խնդիրներին և ամենևին իրենց բացատրած չեն, թէ ո՞րն է այդ յեղափոխութեան հիմնաքարը։ Այդ սխալից կարող են մեծամեծ վնասներ առաջանալ, որ սպառնացում չստ զգալի կը լինի։

Այսպէս, որովհետև մեր միտքն, այժմ՝ դարձեալ ու դարձեալ կրկնում ենք. — միշտ գտնանք զէպի աշխատաւոր ժողովուրդը, որի խտերից է ծագել յեղափոխութեան պահանջը, որի մեծ գաղափարը հայութեան մարդկային առաջադիմութեան ու զարգացման մեծ գաղափարն է, որի չափերի նպատատար լուծումով կիրառութիւնը բոլոր հայերի, ամբողջ հայութեան քաղաքական, անտեսական և հասարակական ազատութիւնն ու բարձրութիւնը։

Աշխատաւոր ժողովուրդ՝ ահա՛ մեզ ընկերը — մեր այժմ։

Ճորձանց խնդրոյն վերջնական կարգադրութիւնը վտանգնեղ իրատէլին եղնելը և անոր հետ տխրամբ յունաց պատրիարքին վերադարձը յիւր պաշտօնը։ Այս առթիւ հայ մը չէ կարող առանց շառադունելու համեմատութեան գնել երկուց պատրիարքաց ընթացքն որք զլիտվին իրարու կը հակառակին։ Աւրգեան փառասէր և ազգապաշտ պատրիարքը՝ հայ յեղափոխականաց սպառնական գիրքէն օգտվելով՝ համարձակութիւն կատու Գոնէն երկար ժամանակէ ի վեր խօսադաշտ կաշառքները չմերժելու և՛ առանց հասարակութեան շահոյցն ապաստաւոր ունէ արդիւնք մը ձեռք բերելու՝ կը վերադառնայ իւր աթոռը, ազգին ընդհանրութեան զայրոյթը և բան տարկերոց անէճըը հրաւիրելով իւր վրայ. անգին յունաց պատրիարքը՝ հայոց պէս ժողովրդային ուժգին շարժում մը չունենալով հանգիստ ի նպատակ իւր պահանջմանց — որք հայոց պահանջմանց մի փոքրագոյն մասին իսկ հազիւ կհամապատասխանէին — արիւարար կը մաքսաւ Գոնէն հետ և իւր պահանջմանց ամէն կէտերուն զոհացում տրուելէն և իւր առկա մ'աւ հաստատուելէն վերջ միայն կը զիջանի պատրիարքական աթոռը վերադառնալու՝ հրաւիրումը։ Այդպիսի ժողովուրդ և այդպիսով յոյն ժողովրդեան անկեղծ համակրանաց կարծանանայ։

Յայտնի է թէ մի քանի տարի յառաջ Արուստանայի Գարեգին եպիսկոպոսը Տրապիզոնի պատրիարքական փոխանորդ կարգուած էր, երբ Գրան մէկ հրամանը յանկաւք Պոլիս բերել տուաւ զինք, պատճառ բերելով որ սուլթանը հայ կապան հնազանդութեան խիստ հետաքրքիր լինելով և զիտնալով իւր համոզութիւնը յայտմ' մասին, իրմէ բացատրութիւններ առնելու համար՝ զինք մայրաքաղաք կը հրաւիրէ։ (Ժամանակին տեղական լրագրիւր լրջօրէն գրեցին զայս)։ Արդ այժմ՝ Տրապիզոնի գաւառական ժողովը՝ թերեւ հայ եկեղեցականութեան մէջ մի լուսազոյնը չգտնելով՝ դարձեալ Գարեգին սրբազանը տեղւոյն առաջնորդ ընտրած է, Բայց խնդիր է գիտնալ թէ արդեօք սուլթանը իւր հնազանդութեան ուսուցումն անտարբար է իւր սուլթանին և անտարբար է և պիտի թողարկէ՞ այս անգամ ն. սրբազանութեան մեկնելու մայրաքաղաքէն . . .

Միւս կողմէ խորէն եպիսկոպոս Նարայէյ Ազիւրատի առաջնորդ նշանակուած է. մի գուցէ այս առաջնորդութիւնն ալ պատրուակեալ արքայութիւնը խորիման հայրիկի ու խառնադիւրսէ թեան նման։

Թուրք կառավարութիւնը թէ և այժմ հայոց նկատմամբ առ երես հաշտարար տրամադրութիւններ կը ցուցնէ, միւս կողմէ չղաղարիւ իւր խտաութիւններն աւելցնելու այնպիսի բռնապետական տնօրինութիւններով որոց նմանը ցարդ չենք տեսած։ Ստորեւ նշանակեալ իրողութիւնք բոլորական են արդէն՝ մեր ըսածներն հաստատուելու։

Սուլթանին ընդհանուր ներդուլութեան էն վերջը, որով արդէն արձակուած էին բոլոր բանտարկեալքը (°°), նորին անհոգի ամենատեղութեամբ բռնապետն մէջ նշմարելով տասնութէկ հոգի ալ —

ՆԱՄՈՒՅ ԹԻԻՐԲԵՒԱՅ .

Կ. Պոլիս, 2 փետրուար 1891 .

Սուլթանը ստիպեալ զիջումը առ յունաց պատրիարքին՝ հարթուս մէջ հասարակաց ուղադրութիւնը գրաւող զլիտուր գէպքն եղաւ յունաց եկեղեցական ասանձնու-

միտակցությունով հոգի — անոնց համար ալ ընդհանուր ներդրումը չորհեց, և ահա հարկաւոր հիմնական տառապելոյ մէջն՝ տանտ մէկ անմեղներ զուր հանունընդ, ներթափանցան «հրաժարմի» խոյտառակ արարողութեան և յատանկարներն ու մանրակրկիտ ծանօթագրութիւններն տանուելէ վերջ՝ ազատ արձակուեցան . . .

Մայրաքաղաքիս լրագիրք կը ծանուցանեն թէ ոստիկանութեան նախարար Նազըմ օղէյ, արգելելու համար «արքայական և վեստակար» անձանց ի մայրաքաղաքս վերադարձն, հրահանգ տուեր է Բերայի և Վերետարի ոստիկանութեանց որ ամէն շաբթու ցուցակ մը մատուցանեն իրեն յորում նշանակուած ըլլան ամէն օր թէ՛ ցամաքի և թէ ծովու ճամբով եկող ու մեկնող ուղևորաց անունները: Այդ ցուցակ պիտի առնուի այն տեղեկութիւններէ որք պիտի պատրաստուեն մայրաքաղաքիս և արտարձաններու մէջ գտնուած ոստիկանական խրաքանչիւր պահականոցի կողմէ: Ոստիկանք մանրամասնօրէն պիտի տեղեկագրեն թէ ուղևորք և մեկնողք ի՞նչ պատճառաւ եկած են, ի՞նչ պատճառաւ մեկնած են, ո՞ր կից եկած են, ո՞ր պիտի երթան և այլն — կատարեալ պաշտօնան գրութիւն:

Կեկտ. 14. 15 ի գիշերը Այնթապի մէջ «Կեղծոնական թուրքիոյ գոլէճն» որմէ բացառապէս հայ ուսանողք կօգտուէին՝ հրոյ ճարակ եղեր է: Արդեօք հաւանական չէ՞ այդ գէպքին մէջ բարձրագոյն մաս մը նկատուի, քանի որ հաստատված իրողութիւն է թէ թուրքիոյ մէջ հրոյհէք շատ անգամ քաղաքական նկատումներու արգասիքն են . . .

Տեղւոյս «Moniteur» ը յունուար 24 — 5 փետր. թուոյն մէջ կը գանգատի թէ՛ ոստիկանութեան պաշտօնակաք փոփոխներու և մարտատանց մէջ՝ վաճառականաց և պատուաւոր անձանց գրպանները կը խուզարկեն, անգործ միտանակազրկը գտնելու պատրուակաւ . . . Երբ տեղական վարչական լրագիրք անգամ կը գանգատին եղած խտուրթանց և զեղծմանց վրայ, կրնար երեւեալ յիշ թէ այդ ամենը ո՞ր աստիճանի հասած են:

Մի ուրիշ կէտ ալ կարեւոր կը համարիմ քաղել տեղւոյս թերթերէն. «Բրէճ գարուի մարտատան պաշտօնականներէն մին շարաթ օրը թրիկտաթի թղթատարական պայուսակէն քսանի չափ վեստակար գրութիւններ գտնելով յանձնեց յատուկ պաշտօնէին»: Քաղաքակրթեալ կառավարութիւնք նամակագրութեան շաղտնիքը անբռնարարելի կը ճանաչեն և եթէ անոնցմէ մին զեղծմանի գէթ զազանի կը պահէ իւր զեղծումն. իսկ բարբարոս թուրք կառավարութիւնը ոչ միայն կը բռնարարէ, այլ և անպատկառ կը պարծի հրապարակաւ . . .

Նամակաց բացման ասթիւ կէտ մ'ալ յիշեմ որոց վրայ «Հնչակի» ի Էնթերցողաց խորին ուշադրութիւնը կը հրաւիրեմ: Մտոյդ աղբիւրէ կը տեղեկանամ որ սուս կառավարութիւնը թուրքիայէն կտկաս ուղղած նամակներ գաղտնաւ պէս բանալով՝ անոնցմէ վեստակար համարումներուն պարունակութիւնը իւր բարեկամ թուրք կառավարութեան հաղորդեր է, և այսպիսի մի

քանի գաղտնիքներ երեան երկր են . . . դգուլութիւն: Թող բանաւորք խտանան և իրարու ձեռք կտրեան . . . մենք չյուսահատենք, և անշուշտ պիտի չահինք:

Ի վերջոյ սխալ լուր մը ուղղել հարկ կը համարիմ: Կը յիշեք որ երկու ամսոյ չափ յառաջ մի թղթակցութեանս մէջ խօսելով Կարնոյ անգլիական հիւպատոս Վիլիամֆօրտ լոյտի Հայաստանի վիճակին մասին իւր կատարարութեան մատուցած վերջին տեղեկագրոյն վրայ, բեր էի որ հայոց աննպատակ էր այն: Թուրք կառավարութեան յաճախելի յերևրած սուտ լուրերուն կարգէն է եղեր և այս, որուն յայնժամ հատաք ընծայեցինք: Այսօր պաշտօնական աղբիւրէ մը տեղեկացայ որ այդ տեղեկագիրք Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնատան կողմէ հրատարակութեան տրուեր է և մեր պահանջները հիւպատոսի մը տեղեկութեամբ հաստատելու պէտք չունենք, սակայն հարկ կը համարիմ ներկայ ուղղութիւնն ընել, դժբաղդ հիւպատոսին ճամբատարութեան գէ՛մ անիրաւած չլինելու համար — որ Կարին վերադարձին ճամբան պաղ տոնելով թորատապէ մուեր է — և միանգամայն թուրքաց անամօթ մեքենայութիւնքն մի անգամ ևս ի վեր հանելու զիտմամբ:

Պերճ.

Տ Ե Չ Ե Կ Ա Պ Ի Բ Դ

Ա մ ե ն ա պ ա տ ի ռ Տ Տ Խ ո Ր Է Ն Ս Ր Բ Ղ ա ն
Ա Ր Բ - Ե պ ի ս կ ո պ ո ս բ ա Ր Ե խ ն ա մ
Պ ա տ Ր Ի ա Ր Բ Թ ի ռ Բ Բ ի ո յ
Հ ա մ ա յ ն Հ ա յ ո յ
Ի Կ Պ օ լ ի ս .

Ամենադատիւ Արքայան Հայր.

Արպէս յիշեցինք ներկայ ամսոյս 7 թուակիր մի հետագրաւ, պատր. փոխանարդ Արթ. Յոսէփի վարչապետ Սօլախեանն պաշտօնէ հրաժարած և քաղաքէս կէս ժամ հետի խնդիրքատարու փանք քաջուած է. քաղ. ժողովն ալ նամակաւ հրաժարուած և գործուէ ձեռնաթափ եղած է. այդ պաշտօնէից հրաժարականներու երեսն Առաջնորդարանի զուր գոցուած և ներկայ փափուկ ժամանակի մէջ աղգ. ամենակարեւոր գործեր ի բարձի թողուած կը մնան: Միւս կողմէն թշուառութիւնք, վիշտք, տղէտք, հալածանք, սպանութիւնք, աւար.

*) Բաղէշի պաշտօնական այդ հետաքրքրաշարժ Տեղեկագիրք վաղուց է, որ մեր ձեռքն էր անցել, բայց տեղի սրտիկան պատճառով մեզ անկարելի եղաւ տակէ չուտ գիտելու «Հնչակում»: Այժմ էլ նա կորցրած չէ իր եթէ ոչ թարմութիւնը, գէթ իր նշանակութիւնը, քանի որ նոյն քաղաքից մեզ հասած վերջին տեղեկութիւնները երկրի գրութեան մասին նշլ օրինակ, տակէ նսմ անգամ, գէպեր են յիշում: Բացի այդ, այդ Տեղեկագիրքը նշանաւոր է իբրեւ պաշտօնական գօհումէն, որ խորէն իր ժամանակին «բարեկամ» կերպով յանձնել է կրակին կամ փոխին:

Ծ. Հ. Խ.

ատու թիւներ և զանազան բարբարոսութիւնք որ առ օր կը շատանան մեր երկրի մէջ:

Կարնոյ ծանուցեալ գէպքէն վերջ՝ մեր փիճակը մի զարմանալի փոփոխութիւն ստացաւ. մենք այժմ՝ պաշարման մէջ կը գտնուիր, ամեն կողմէ բռնութիւն, հալածանք և նեղութիւն պատեր են զմեզ, կապեր ու կաշկանդեր են մեր սոք ու ձեռքեր: Թղթատարութեան պաշտօնատան մէջ կը քննուին և կը խուզարկուին մեր նամակներ. նոյն իսկ թագէ թագ ոչ որ կարող է նամակ. ներ գրկել, վստահ գի զազանի ոստիկանութեան պաշտօն վարող անխղճ անձեր, փոխաներ և ոստիկաններ աշքերնին չորս բացած ամենայն զգուշութեամբ կը զիտեն մեր քայլ, շարժումներ, խօսուածք և զէնք փնտռելու պատրուակաւ կը խուզարկեն զհայտ: Այս տարօրինակ դրութեան մէջ ժողովրդեան վրայ տիրած է ահ և սարսափ՝ ամեն որ շուտած չիտթած և յուսահատած է, չը գիտնալով թէ այսօր կամ վաղ կը հասնէ մեզ ալ Կարնոյ զիպուածի խիստ ծանրակշիւն...

Շրջակայք և զիւղեր արդէն սկսած է աննկարազրկելի և անպատմելի բարբարոսութիւններ և շարագործութիւններ, մարդոց արիւններ հեղեղի նման կը հոսեն, ստացուածք և ինչք կ'աւարտուին, ամեն օր ու ժամ նորանոր զիպուածներ կը լսուին: Եւ ո՞վ է այս բոլոր շարնաց պատճառ. նոյն իսկ տեղական կառավարութիւն...

Վսեմ՝ կուսակալը Մուշ և Կինճոյ կողմեր պոռոյտի ելաւ մի ամիս յառաջ, հանրածանօթ բարբարոսապետ Մուսա պէյի տուն հիւր եղած է թէ երթալու և թէ՛ վերադառնալու ատեններ: Կուսակալի այն յարգանքը բարբարոսի տան՝ չատ ոյժ տուաւ քրթոյն դործունէութեան. ինքն կուսակալը հոն դառնաւ առհասարակ Վարդէնիս զիւղէն սպանուեցան երկու հայ արտի մէջ (2 ժամ հետի զիւղէն): Բաղբուրեցաւ վարդէնիսցոյ կողմանէ ճիշդ Մուսա պէյի տան մէջ գտնուած պահուած. սակայն արդիւնք՝ ոչինչ:

Տեսնելով որ փոխանորդ հօր և Քաղ. Ժողովոյ հրաժարականներու պատճառաւ՝ ներկայ գտն և աղետալի փիճակը անձանօթ կը մնայ աղք. պատրիարքարաւ նիղ քարժան համարեցանք ստորագրութեամբ պատրաստել սոյն տեղեկագիր, որ զիպուածոց ճշգրիտ նկարագրութիւնն է...

1) Մ շ յ գ ա շ ա — Վ ա ր դ ե ն ի ս գ իւ լ զ.

Այս հայաբնակ զիւղ, որ չատ մը վտեր ու հալածանքներ կրած է Մուսայ պէյէն, իւր հայր Միրզա պէյէն և եղբայր Ճաղօյէն ու այլ և այլ արբանիակներէն ու ծառաներէն, զանոնք մէկ կողմ թողնելով, վերջերս պատահած սրտաճմլիկ աղետաբեր գէպքն նկարագրեմք: Կուսակալն ի վե ա ն գիւղ Մուսայի տան հիւր գտնուած պահուած սպանուածները անցնենք, այս զիւղէն օրիորդ մը հարսնութեան տարուած է ի Մ ու շ լ զ ա շ լ զ ն գիւղ Չ ք ու լ ր. ըստ նախնի սովորութեան հայ զիւղացոց հինգ մարդ եկած էին հարս օրիորդին տանելու հօր տունը (դ ա ր ճ կանուանեն), ճամբու վրայ քանի մը

սպառազինեալ քիւրդեր տաջնին կենին և „Մենք զձեզ այսպիսի տեղ մը կը փնտռենք“ ըսելով՝ միանին կը յարձակին և տեղացած հրացանի զնտակներէն հայերէն մինը արիւնաթաւալ գետին կիցնայ միւսը կը վիրաւորէ: Հայք իրենց կեանք և պատիւ պաշտպանելու համար կտախտուին կրակ ընել քրդաց վրայ, երկու քիւրդ կսպանեն և մէկ վիրաւոր կիցնայ: Այս պատահարի վրայ քիւրդեր զրգուռած 7 - 8 հարիւր մարդու չափ կը հաւաքուին ի Մ ա ո ն ի կ գիւղ և կը պոռոստուին յարձակում ընել Վ ա ր դ ե ն ի ս գիւղի վրայ: Կառավարութիւնը փոխաւ նակ քննութիւն կատարելու և արդարութեամբ յանցաւորը պատժելու՝ ռազմամթերիւք կանոնաւոր դօրաց խմբի մը և ընդնոսին խումբ մը չէրբէս ոստիկաններ (որք չեմք զիտեր ինչ գաղտնի նպատակաւ վերջիս անակնկալ ոստիկան տնտեսցան) զրկելով՝ պաշարել տուաւ հայ զիւղն, որք զիւղեայն յարձակվելով զիւղի վրայ եօթաւ նասուն մարդ ձերբակալեցին և մնացեալք փախան: Հարսուն, քանայք և աղջկունք դօրաց և չէրբէսաց ռանձգութեան մնացին: Պատուոյ և ընչից մնան ինքնին յայտնի է: Սակայն բարբարոսական գործի արդիւնքն եղաւ 70 անձի բանտարկութիւնն ի Մ ու շ, բանտի մէջ ինչ տարօրինակ պատիժներ կրած են ու կը կրեն, Մշոյ Առաջնորդարանէն կարող էք տեղեկանալ: Այժմ զիւղի մնացեալ բնակիչներն ալ իւրեանց հունձք և երկրագործութիւն թողած աստ անդ փախան և Մշոյ մէջ իւր անուամբ իբր զարդ փայլող հայ գիւղ մը, Վարդէնիսը, այսօր աւերակայ կոյտ դարձած է. երկրագործի ամբողջ աւարտան արիւն քրտինք ախտատութեան արդիւնքն այժմ քրդաց, դօրաց և չէրբէսաց ոտքերու տակ կոխկրտուեցան և ոչնչացան. մնացեալն ալ մերձակայ զիւղերու քիւրդ բնակիչներուն է:

Վարդէնիսը, երկու քիւրդ սպանած է ըսելով, այդպէս իսպառ աւերակ կը դառնայ երկու օրվան մէջ. իսկ անթիւ ու անհամար հայ կսպանուին քրդաց կողմէն: սոքա անպատիժ կը մնան... Զարմանալի անգթութիւն... և միթէ՛ Վարդէնիս աւերակայ կոյտ մը դառնալով խաղաղեցան քիւրդերը: Ա՛շ երբէք քիւրդերը կառավարութեան անարդար ընթացքէն և պաշտպանութենէն օգտուելով, 7 - 8 հարիւրի չափ ի ս ո յ թ ե ս ց ի, ա զ ը ե ն ե ս ց ի, ն օ ք ե ց ի և զանազան ցեղեր հաւաքուած են Մշոյ գաղտնի հայ զիւղերու վրայ յարձակելու դիտաւորութեամբ: Չեմք գիտեր թէ վաղը ինչ պիտի լսեմք. միակ ճշմարտութիւնը սա է, որ բոլոր հայ զիւղեր ահ ու դողի մէջ ինկած ոչ որ կը համարձակի իւր արտ ու ափն երթալ. իսկ հնճոց ժամանակն կանցնի...

2) Մ ու շ լ զ ա շ լ զ ն գ իւ լ զ — Չ ք ու լ ր:

Կառավարութեան կողմէն պաշտօնեայք խուզարկեցին այս զիւղ զէնք փնտռելու պատրուակաւ: Այնչէն կար որ գտնեն. իսկ խուզարկիչ պաշտօնեայք մեծ մնաստուն զիւղի հայ բնակչոց: Այս ալ անցնեմք... Զորս օր յառաջ 750 ոչխար քիւրդեր աւառարեցին: Կառաւարութեան բողբոսեցաւ, ո՛չ բնութիւն, ոչ արդարութիւն

և ոչ իսկ կարենորութիւն տրուեցաւ: Կըստի թէ Կոստային բտած է, որ ստատ է և զրպարտութիւն . . .

3) Տ ա տ ա վ ա ն ք զ ի ւ ղ — Ա խ ւ ա թ .

Անցեալ տարի Մուսա պէյ իւր արբանեակներով յարձակեցաւ այս գիւղի գիւղապետի, Յ ա կ ո բ ի, տան վրայ՝ սպանեց զինքն և նորա հայրն, կողոպտեց նահապետական տուն մը՝ որոց ժառանգորդ գատ վարելու համար՝ տակաւին կը գեղերի 'ի Կ . Պօլիս: Այս անգամ ալ աւար հինգ հարիւր ոչխար և մեծ ֆետա տուին: Ախլաթու կառավարութեան բողոքած է . արդիւնքն՝ զրօ

Մ շ յ յ գ ա չ ա ի, Ա խ ւ ա թ ու, Պ ու լ ա ն ը . խ ա յ և Մ ա լ ա ղ Կ Ե Ր ա ի վիճակները կը տիրէ վախ և սարսափ . ճամբայներ գոցուած, հաղորդակցութիւններ խզուած են, և աւելի վատթարն այս է որ հաւնաբեր ժամանակն հասած է . չենք գիտեր այս երկրագործ ժողովուրդ ի՞նչ պիտի ընէ . . . Դառնաճաճ մեր Բ ա ղ Ե շ յ յ վրայ: Մ օ տ Կ ա ն ու ք իւր գերի, Ա թ մ ա ն ց ի, Գ ի մ ը Լ ց ի և այլ ա շ Ե թ ն Ե Ր ն ալ օգտուելով կառավարութեան ընթացքէն, քաջալերւեցան, դուրս ելան իրենց խոռոչներէն և ասպատակութեան դաշտը ելան (չը մոռնանք ըսել որ Բամազան ամսոյ մէջ մեր Կուսակալը Մօտկանի զանազան ցեղապետներին խրքով հրաւիրեց ի Փ թ ա Ր ի և ընծայներով զրկեց . . .):

4) Մ օ տ Կ ա ն ու, Խ ու Ր և Յ օ Ր ց է ն ք զ ի ւ ղ Ե Ր .

Այս գիւղերու ոչխար ու տաւարն աւարառեցին և Յօրձէնքէն հայ մը սպանեցին

5) Բ ա ղ ի շ յ յ վիճակ — Կ Ե Ր ք ի ն Մ ա Ր գ ո Ր գ .

Այս գիւղի վրայ կուգան Ա թ մ ա ն ց ի, Տ ի մ Ե Լ ց ի, և այլ աշերթները, հնձելու վրայ դանուած արմուխ իրենց անասնոց կերցնելէ և ուղորմելի ժողովրդեան ազգիպազգի նեղութիւններ տալէ զինի՝ խ ա ֆ ի անունով տուրքերնին կը պահանջեն և հայհոյանօք ու գանիւք կառնուն: Մօտկացիներն ալ եկած և ապա նեղութիւն տալով, բտան ոչխար և երկու հարիւր զուրուշ ստակ կանեն:

6) Բ ա ղ ի շ յ յ վիճակ — Խ մ Ե Լ Զ ու Ր զ ի ղ (1 ժամ հետի քաղաքէն) .

Մօտկանցիներ եկան այս գիւղ, կերակուր ուտելէն վերջ, զիւրուան ժամը երկուքին զիւղացոց բոլոր հարստութիւնը կաղմոզ հարիւր ոչխար, հովիւն ու գիւղի երեւելիներէն Ս ի մ ո ն անուն անձն առին տարին: Քանի մը տարիներու տպաւորիկ մնացեալ խ ա ֆ ի ն պարտին վճարել, որ գերիներ յետ դառնան

(Շարունակութիւնը միւս համարում.)

ԱՆԻՐԱԽ ԵԱՐԶԱՆՈՂԻՆ .

Հ ն չ ա կ ի նախորդ համարում՝ զետեղւած էր մեզ ուղարկւած փոքրիկ նկատողութիւն մի քանի թերթերին, ի միջի այլոց և Ա Ր մ է ն ի ա յրազիրն, ուղղված: Այդ փոքրիկ նկատողութեամբ զգուշացնում էին, թէ պէտք չէ յեղափոխական շարժումներ ի ն Ե Ր ք ի ն գրութեան, որպէս նաև քաղաքական փախստականների այժմեան բնակատեղիի մասին յայտնութիւններ անել, ինչպէս արել էին այլ և այլ եղանակով մի քանի թերթեր, նրանց հետ և Ա Ր մ է ն ի ա ն: Կատողութեան մէջ իրաւացի կերպով ասվում էր, թէ այդպիսի յայտնութիւնները կարող են ունենալ տխուր հետեանքներ: Ա Ր մ է ն ի ա ն, որ գիւղերի կերպով զիւղ լսել, երբ հարկաւոր է խօսել կարեւոր խնդիրների մասին, այդ ըտութեամբ առաջուցանելով միմիայն իր անկարողութիւնը, — յարձակելու միշտ ընդունակ է եղել: Ա Ր մ է ն ի ա ն արդէն սովորութիւն արած լինելով քողարկւած ոճով անդադար յարձակվել մերթ սրա, մերթ նրա վրայ, իր վերջին թւերից մէկում Հ ն չ ա կ ի ի Ե Ր Կ ա ղ ղ նկատողութիւնը պատուակելով, արդէն բաց կերպով Հ ն չ ա կ ի զէմ գրում է գրեթէ մէկ ամբողջ սինակ: Այդ զրուածքն այնքան կրքոտ, այնքան անիմաստ յարձակողական ոգով է գրված, որ կարգալով, մենք միանգամայն դարմանանք: Ի՞նչ է պատահել ալ . փորթու գալիսնի հետ: Միթէ Հ ն չ ա կ ու մ զետեղւած մի պարզ և Գործի չափի տեսակետից անհրաժեշտ նկատողութիւնը ձեզ այդչափ խիստ խայթում է . . . Եւ կրքոտ ոճով Ա Ր մ է ն ի ա ն ճգնում է իր ընթերցողներին հատապայանել, թէ Հ ն չ ա կ ը յարձակում է՝ է նրա գէմ: Ա Ր մ է ն ի ա ն իրեն շատ մեծ կարենորութիւն է տալիս այդ խօսքն ասելով, քանի որ Հ ն չ ա կ ի համար վաղուց ի վեր է, որ այդ յրազիրը զոյոթիւն չունէ: Հ ն չ ա կ ի իր պարտականութիւնն է համարել հրատարակել իրեն ուղարկւած այն երկտող պարզ նկատողութիւնը՝ հայ թերթերին զգուշացնելու համար գործին միասող հրապարակային յայտնութիւններից, որ կարող էին տկամայ ու անփորձութեամբ անել, ինչպէս էլ եղել էր: Ա Ր մ է ն ի ա ն յարձակւում է միւր գէմ, ուղենալով ասել թէ ինքն այդպիսի բան չէ արել: Մենք նրա այդ յարձակումը ըտութեան կը մատնէինք, բայց եկէք ու տեսէք, որ փորթու գալիսնն իր թերթի նոյն իսկ յաջորդ երկու համարում անում է նոյնօրինակ յայտնութիւններ, այդպիսով նոյն ինքն ճարտարապէս հաստատելով Հ ն չ ա կ ու մ զետեղւած նկատողութեան ճշմարտութիւնը և մեր գէմ իր յարձակման անիրաւութիւնը: Բայց այս անգամ փորթու գալիսնն այդ յայտնութիւնները գրում է այնպիսի եղանակով, որ չափազանց դատապարտելի լինելով, միանգամայն կրում է իր վրայ ամենանսեմ գոյն: Տեսնենք:

Ա Ր մ է ն ի ա ն վերջերս իր երկու թւի մէջ պարունակած մի երկայն յօդուածում մի տեղ ուղղակի յայտարարում է թէ Կալմէթ գալիս գնում են կամուտքների խմբեր և մինչև իսկ յայտնում է նրանցից մէկի ճանապարհորդութեան ամբողջ զիծը: Այնուհետև անվայել թերևս զրպարտիչ ակնարկներ անել այնպիսի մարդկանց գէմ, կամուտքների գէմ, որոնք ո՛չ մի միջոց չունեն այդ զրպարտութիւններից արդարանալու հաստատութեան առջև — միանգամայն հեռի է աղետութեան ամենատարակաւն պահանջից: Բայց այդ, ի՞նչ անուն տանք այն բանին, որ փորթու գալիսնը գծագրում է նրանց ճանապարհը: Միթէ իրատունք չունենք զրկու, թէ Ա Ր մ է .

ն ի ա ի այդպիսի յայտնութիւնները կարող են վնասել գործին: Բայց թէ մինչև ի՞նչ ծայրայեղութեան է հաս-
ցնում իր յայտնութիւնները Փորթուգալեանը — դա
միանգամից աչքի է ընկնում հետեւեալից: Կոչն վերադառնալով
յոգութեան սկիզբներն իսկ նա յայտարարում է թէ մի
հնչաւ եւ աւն եւ կեւ է Վաւրէժ յեղափոխական
գործը իր համար եւ ամեն բան կատարեալ պարձ-
նելու համար, Փորթուգալեանը յայտնում է այդ հնչաւ-
եանի ազգանունն ու կգրնատաւն ու վեւր-
ջաւորութիւնը: Օ՛, դա արդէն չափազանց է՝
հասնել մինչև այդ աստիճան: Դրանից յետոյ մեզ ուրիշ
ոչինչ չէ մնում, եթէ ոչ Փորթուգալեանի այդ յայտնու-
թեան փաստը հայ հասարակութեան դատաստանի առջև
դնել: Մենք չենք կարող չը յայտնել, որ Արմէնի ա ի
խակական պատկերը միշտ ծածկող դուրս պատգում է
Փորթուգալեանի այդ վերջին քայլով և, այո՛, նոյեկանք
ազգում անաչառ ու արգարտեւր մարդու վրայ: Կրկնում
ենք, դա արդէն չափազանց է . . . Սակայն հայ հասարա-
կութիւնն ինքն կը դիտենայ արժանաւորապէս զնահատել
նրան:

Արմէնի ա ի խմբագիրը շատ զայրացած է Հնչաւին
գործող տեսնելով, նամանաւանդ, որ Հնչաւեան Արտակ-
ցութիւնն ասածինը պարզեց յեղափոխութեան գրողներ
Դրա գէտ նա ուզում է «գարման անել», և ի՞նչ եղաւ
նախով: Սակայն տեսաւ միջոցներով նա ճշտում է ստուեր
ձգել հնչաւեան անուն վրայ, նախանցել Արտակցու-
թեանս ծագողականութիւնը, որ հայոց թշնամի թիւրքն
անգամ չէ հերքում, թէ ձեռք է բերվել յեղափոխական
գործունէութեամբ ու արիւնով: Եւ ահա իր այդ նախ-
տակին հասնելու համար՝ Արմէնի ա ի նոյն վերո-
յիշած յոգութեամբ, սնապառ պոստալիտութեամբ,
նեղաՀայեաց կերպով և իրեն յատուկ ու բնորոշ ոճով
յարձակվում է հնչաւեանների գործունէութեան վրայ և
ի վերջոյ, երբ այլ ևս հասնում են խօսքերն իր յարձա-
կունների ծարաւը յագեցնելու համար, նա յանկարծ
կուրս է թափում իր բերանից հետեւեալը թէ՛ վերջիշած
հնչաւեանը եկել է Վաւրէժ «գրամ կու տալու» համար:
Կեղտոտ, անաւօթ՝ յարձակում ու գրպարտութիւն: Եւ
այդ տողերն իր լրագրում զետեղողը զեռ յանդգնում է
իրեն հասարակական գործիչ անուանել, ազգի շահերը
պաշտպանելու յաւակնութիւն ունենալ: Կրքերին զոհ —
մոռանալ ամենատարրական ազնուութիւն անգամ . . . Եւ
ի՞նչ. կարծես այդ բոլորն արդէն չափից անցած չը լինէին,
Արմէնի ա ի ան վերջիշած հնչաւեանին և նրա ընկերներին
ասում է թէ՛ ընդունակ էք միայն մատնել լինելու: Այդ
ի՞նչ ստոր ու կեղտոտ գէնք ուրիշների գէտ, այն էլ
այնպիսի մարդկանց գէտ, որոնց հայրենասիրական
գործերը ներկված են իրենց արիւնով: Այդպիսի գէնք
գործածողն ի՞նչպէս չէ ամաչում այն ինքն իրենից, քանի
որ քաջ գիտէ թէ իր գէնքը որքան կեղտոտ է: Աւօթ է
յեղափոխականն ու գործն ու նրա անձնուրաց զինւորների
պատիւն անձնական իրաւալիքը պարձնել: Աւօթ է ուրիշ
ներին ստորացնելու համար գիտել այդպիսի ստոր միջոց-
ների: Աւօթ է ամեն սուրբ բան այդպէս տգեղաբար
ոտնափոխ անել և մի քաղ իսկ խղճի խայթ չըզգալ, որ
հասարակական բարձր աստարեղի մէջ այդպիսով ներս
են բերվում վատ ու անբարոյական սովորութիւններ ու
բարբեր ղերջապէս, բաւական է . . .

Մի շատ բնորոշ կէտ: Փորթուգալեանի յոյուածաղիրը
յայտնում է որ իր խօսակից հնչաւեանն ասել է թէ՛
Արմէնի ա ի հինգ վեց տարւոյ ընթացքում միշտ

գրամ է հաւաքում և ոչինչ գործ չէ ցոյց տվել ամեն ին-
քն է, դա ձեզ զարցացնում է: Զիրաւի, կարող է զայ-
րացնել, որովհետեւ դա ճամարտութիւն է, որ առաջին
անգամ հրատարակ է հաւաքում և հաւաքում չէ չափա-
զանց միջոցով ձեռք բերելու: Մենք այդ խնդրի
մասին չենք խօսել թերեւ, եթէ դուք ինքնեզ առաջինը
չը բարձրացնէք նրան: Սակայն միթէ ձեզ չէ, որ դուք
միշտ գրամ էք հաւաքել և՛ ասելի չափ գործ ցոյց չէք
տվել: Ա՛, երբի Սե ծովի խոր յատակում էք գործում,
որ ոչ ոք չէ տեսնում: Բայց քանի որ ձեր գործը ոչ ոք
չէ տեսնում, ինչով կարող է հասարակութիւնը երաշխաւոր
լինել, թէ դուք գործում էք Սե ծովի յատակում: Քանի
որ ձեր գործը ոչ ոք չէ տեսնում, այն ժամանակ, այո՛,
հասարակութիւնն իրաւունք ունի ձեռնից հարցնելու, թէ
ո՞ր են զնում իր գրամները, որ դուք հաւաքում էք
չարունակ: Եւ այդ կատարելապէս իրաւացի հարցն չեն
կարող պատասխան լինել ոչ լուծիւնը, ոչ անձնապար-
ծութիւնը, ոչ պատիր խոստումները և ոչ հայհոյանքը . . .

Որչափ պէտք է կրքերի ենթակայ լինի մարդ, որ չը
խոստովանէ Հնչաւեան Արտակցութեան յեղափոխական
գործունէութեան ամբողջ մեծ նշանակութիւնը, մի գոր-
ծունէութիւն, որ մեր թշնամի թիւրք մամուլն անգամ
խոստովանեց և քանիցս գրեց, թէ օսմանեան պատմու-
թեան մէջ այդպիսի ներքին շարժումներ երբէք չեն եղել
երբէք տեսնված չեն:

Որչափ պէտք է կրքերի ենթակայ լինի մարդ, որ
հնչաւեան անունը ստորացնելու համար մի քաղ իսկ չը
վարանէ միջոցների ընտրութեան մէջ և իրեն պոսի իր բոլոր
կեղտոտ յարձակումներն նրանց «բաշխողով» իսկ անուա-
նէ: Չիր այդ յարձակումներին, պ. Փորթուգալեան, Կէմալ
մայ Մանուկ ու Յովհաննէս Գումրուեան հերոսների սակր
ներն են շարժվում իրանց գերեզմաններում: Չիր այդ յար-
ձակումներին, Վաղարշապատի, Զանկալեանների, Փիլիսո-
պոսների, Վարդ - Պատրիկեանների և այլն հայրենասէր
սրտերն արգար զայրոյթով են լրջվում բանտերի մէջ . . .

Հասնել մինչև այդ աստիճան . . .
Սակայն այդպիսի հերոսներ զեռ շատ պէտք է տեսնէք
և զեռ շատ պէտք է զայրանաք: Բայց ի՞նչ անենք. — դրա
մեղքը մերը չէ և ձեզ չը զայրացնելու համար, հաւատա-
ցէք, մենք չենք կարող գործից զապարել:

Շատ բան կարելի էր ասել, բայց հարկ ենք համարում
վերջ տալ մեր խօսքին, ուղղելով Փորթուգալեանին հետե-
ւալը. — Բաւական է. վերջ գրէք միանգամից ընդ միշտ
ձեր այդպիսի ընթացքին, որ պատիւ չէ բերում հայութեան
և վնասում է ու Գործին: Փա՛նք Աստուծոյ, յեղափոխական
ասպարէզը լայն է. գործեցէք, եթէ կարող էք. խօսելը
գործել չէ: Եթէ յիրաւի դուք ձեզ ուժեղ և գործելու
թափել գործողներին վատարանելու ու ստորացնելու:
Մենք միանգամայն ժամանակ չունենք և ազգային այժմ.
եան սուղ քաղէին յանցանք ենք համարում այդպիսի
խնդիրներով զբաղվել իսկ եթէ այդ գերակատարութիւնը
ձեզ հաճելի է, այն ժամանակ շարունակեցէք. մենք կը
լինենք ականատես և հասարակութիւնը — դատաւոր:

Ահն. . .

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԲԵՍՈՅ՝

Կ. Պոլիս, 26 փետրվար 1891 ՝

Թիւրք կառավարութեան բարբարոսութենէն ու հարստահարութենէն յուսահատեալ Հայ ժողովրդեան շարժումները կատաղեցուցած են զայն. շարժում Կարնոյ մէջ Կիլիկիոյ մէջ, նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ միով բանիւ շարժում ամբողջ Հայութեան մէջ: Նա ապշած չը գիտէր թէ ի՞նչ կերպով կատեցունէ այն շարժումները որոյ բուն պատճառը նա ինքն՝ կառավարութիւնն է, նա կը կարծէ բռնութեամբ, խտրութեամբ կարող է սուաջքն առնել, առանց մտածելու թէ բանի կը հալածէ այնչափ կը տա բաժէ:

Վերջերս գրութեան ծանրութիւնը ու կառավարութեան խտրութիւնները, ինչպէս ուրիշ անգամներ, նոյնպէս այս անգամ հինգ հարիւրէ աւելի զէյթունցոց տեղի տունին ապստամբելու և լեւր քաղաքելու: Այս քաղաքացիք խեղճ ու իշուատ, սակայն աղաատաէր լինելով՝ չեն կրնար հանդուրժել ստրկութեան ծանր չլթայից, ուստի իսկոյն և եթ կը ցնցուեն և գէթ պահ մը մէկ կողմ կը հրեն ու կը ձգեն ստրկութեան լուծը առանց երկար բարակ հաշիւներ անելու: Այս շարժումն կառավարութեան կատաղութիւնը կը բաղմատաւէ. նա անմիջապէս վաշտ վաշտի ետեւէ կը հասցնէ Չէյթուն, որպէս զի որչափ կարելի է զաւել և պատմէ ապստամբները: Երբ ի դուր կը վատ նուրն իւր ճիգերը, կսկսի նորանց աղգակիւնները և տեղւոյն զլխաւորները, այլ և այլ խորամանկութեամբ կը բան տարկէ, կսպառնայ ստիպելով որ հերոսները յանձնուին: Սակայն այդ քաղաքը հայ ազգին և շահատէր Եւրոպային դէպ իրենց ունեցած անտարբերութիւնները, աչքի առջև ունենալով հանդերձ կը զիմանան յանձնառու լինելով ամեն թշուառութեանց ու նեղութեանց: Կառավարութիւնը վախենալով ու կասկածելով, թէ մի՞ գուցէ շարժումը արձագանգ տայ Կիլիկիոյ մնացած հայաշատ զիւղաքաղաքները, կսկսի իւր շարժութիւնը ամբողջ Կիլիկիոյ հայոց վրայ տարածել: Սուս ու անտեղի կասկածներով Հաճընոյ զլխաւոր ու պատուաւորներէն Չճ մարդիկ ձերբակալած կը տանին Սիս՝ ուր բանափն մէջ խեղճերը ի դուր կը սպասեն ու կը յուսան ստորիարքին հեռագրած պատիկ ընդհ. ներողութեան: Այս բանտարկելոյ մէջ կը գտնուի նաև Միայ. Բնի. Հաճընոյ Աղջկանց Վարժարանի վարժուհիներէն, օրիորդ Հայկանուշ Վ. Պոյաճեանն՝ որ քոյրն է Հաճընի բժշկութեան ուսանող Համբարձում Վ. Պոյաճեանի՝ զոր կառավարութիւնը ձեռք ձգելու համար Պոլսոյ մէջ նորա սննեկակիցները, գաղութակիցները ու հայրենակիցները կը բանտարկէ, կը չարչարէ, որպէս զի իմաց տան թէ ո՞ւր է: Երբ չէ յաջողեր բռնել զայն կերելի թէ իւր կատաղութեան թոյնը նորա ընտանեաց և խեղճ քրոջը վրայ թափած է: Ի՞նչ անիրաւութիւն և ի՞նչ բարբարոսութիւն:

Կարող էք երևակայել թէ ո՞ր աստիճանի է Կիլիկիոյ մէջ բարբարոսութիւնը, որ մինչև իսկ թրքաւէր ու անտարբեր Միւրտիչ կաթողիկոսը, ստիպուած է եղեր տեղեկագիր մը գրելի ի պատրիարքարան, խնդրելով որ Բ. Դրան ներկայացուի՝ ուշադրութիւն հրաւիրելու համար Կիլիկիոյ անտանելի վիճակին վրայ: Այս տեղեկագիր խառն ժողովոյ մէջ կը կարդացուի և մի քանիսը կառաջարկեն որ թ ա գ ռ ի ռ ո Վ մը Բ. Դրան մատուցուի. սա կայն Ունճան Աբիկէֆէնաին (կերելի իւր փառափրական ձգտումներէն զրգեալ) այդպիսի թ ա գ ռ ի ռ մը արուիլը անյարմար կը գտտէ և կարգելէ Պատրիարք և Ունճան

գործիք ընելով Քաղ. Ժողովոյ ատենապետը, ուղած խաղերն կը խաղան ազգին զլխին. նայենք վախճանը ո՞ւր կ'հասնի:

Վանայ քահանայից գաւթ պատրիարքարան հեռագիր մը քաշելով, սաստիկ բողբոսած է Վանայ կուսակալին դէմ՝ որ բոլոր անկարգութեանց և չարեաց զլխաւոր պատճառը կը համարուի, նրա պաշտօնանկութիւնը խնդրեր է. Սակայն կուսակալը, միւս կողմանէ ճարպիկութեամբ՝ թէ բռնութեամբ, կը յաջողէ մօտ 250 անձանց ստորագրութեամբ, ի նպատակ իւր հանրագրութիւն մը կորզել և Պոլիս գրիւն Ի՞նչ խեղճատաղութեւն Վերջին տեղեկութիւնը կը յայտնեն թէ ժողովուրդը ճարահատեալ և շուտով ի՞նչ ընելը չի գիտելու խօսք կայ թէ օրթօգորթս կրօնը ընդունել կուզէ եղբւր:

Հ. Ո. Բ.

ԽՄԲԱՎՐՈՒԹԵԱՆ՝ ԿՈՂՄԻՑ

Ձանաղան տեղերից մեկ հաղորդում են, որ երևան են եկել ինչ չոր զիմակաւոր անձեր և իրենց ներկայացնելով իբրև հնչակեան, օգտվել են Կուսակցութեան ժողովրդականութեամբ և մեծագումար զբաններ են ժողովել կամաւորների խմբեր կազմելու և կամ այլ և այլ պատրուակներով: Ի վերջոյ յայտնվում է որ այդ անձերը խաբիւրայ բաղդախնդիրներ են, որոնց թիւն այժմ շատ առատէ հայերիս մէջ: Կրամական գումարները ժողովելուց յետոյ նրանցից տմամբ սնհետանում են, տմամբ էլ անասելի լքութեամբ շարունակում գարձեալ իրենց արհեստը, մինչև որ ճամբատութիւնը երևան է գալիս: Չգուշացնում ենք հասարակութիւնը, որ այդպիսի դէպքիցում պահանջեն Կուսակցութեան պաշտօնական վիպագիր, որպէս զի խարդախ ու ստորաքար խաբեբայութեան զոհ չը լինեն:

Սահասարակ մեր ստացած գումարները միշտ յայտարարվում են «Հնչակում»:

Պ ա տ ա ս ի ս ա ն . — Ուստիս . Ն . ք . Զ . ին Կոս ք զայրացած էք, որ իրենց անուշով ու զիրքով պարծնեցող այդ անձերը ձեռք են զարնում ամենակեղծատ միջոցների արգելքներ ստեղծելու Կուսակցութեան գործերին և նրան զրա մական նպաստներ ուղարկելուն: Եթէ նրանք աղնամիտ ու բացերես մարդիկ են՝ չէին զիմիլ ինտրիգներ սարքելու վարագործի ետեւ: Եթէ նրանք անձնական ոչինչ չունեն և մեր դէմ են գաղափարական տեսակէտից, թող հրապարակապէս գաղափարական մարտ յայտարարեն: Իսկ քանի որ նրանց գործունէութիւնը ինտրիգների վարագործի ետեւից դուրս չի գալ, նրանք մեր աչքում լսի անոյժ թշնամի ինտրիգանտներ են:

Կուսակցութեան Ղանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետևեալ գումարները .

Բօլզարիաի Սօֆ. քաղաքի ընկերութեան կողմից՝ Սաթենիկի ու Նէկտարի ձեռքով 94 Փր. , Ռազդ. քաղ. րժ. Ն. Զ. Ա. ից 10 Փր. : Ռուսչ. քաղ. Ա. Բ. ից 10 Փր. : ՌումանիաՅք. քաղաքից Յ. Մ. ից 100 Փր. , Բէրլ. քաղ. Կ. Ա. ից 20 Փր. , Քոնստանտնուքաղաք. Գ. Մ. Գազ. ից 10 Փր. , Պարսկաստանի Լնդէլիքաղ. Հ. Ֆ. ից 4 րուբլի: Ն. քաղաքից Խ. Վ. ից 6 րուբլի: Ֆրանսիաի Մարսէլ ք. Մ. Զ. ի միջոցով հետեւեալ գումարները — Պալանձէ 10 Փր. , Վահրամ 5 Փր. , Ոմն պօլսեցի 2 Փր. , Մաժակուտի 5 Փր. : Տիգրան 1 Փ. , Սնանուն 5 Փ. , Վաղարշապատ 2 Փ. :

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետեւեալ հասցեով.

Montpelier (France) . M. Beniard . Poste Restante .

Լօնդօն . Հայկական աղատ տպարան .